

ԾԱՂԻԿ ԿԸ ՀՐԱՄԱՐԱԿՈՒԻ ՇԱՐԲԻՍ ԵՐԵՐԸ Ե
ՄԱՐԻՆ 50 ԹԻԼ:

Բաժանորդագին ԿԱՆԻՍԻԿ՝ Թուրքիոյ Համար
տարեկան 50 դրշ, Խուսիոյ Համար 5 բուրձի,
ուրիշ երկիրներու Համար 12 ֆր: — Վեցամսեայ:
բաժանորդագրութիւն եւս կ'ընդունուի:

Գաւառներէն դրամի տեղ Օսմանեան Նա-
մակագրով՝ եւս կ'ընդունուի:

Միայն երեք թիւ ապառիկ կը զրկուի. այնու-
հետեւ բաժանորդագին չը վճարողը կը դադրի
թերթ ընդունելէ:

Մանուցման տողը 2 զուրուշ:

ԾԱՂԻԿ

Հ Ր Ա Գ Ի Ր

ԾԱՂԻԿԻ ՎԵՐԱԵՐԵԱԼ ԱՄԷՆ ԳՈՐԾԻ ՀԱՄԱՐ ԳԻՄԵԼ

Ա. ՏԵՐԵՔԻՆ-ՀՐԱՄԱՐԱԿԻՅ

ՅՈՒՆԱՆ Գ. ՓԱԼԱԿԱՇԻԱՆ

Պոլիս, Պաշտ-Գաթու, Թաշխան, Թիւ 50

در علیّه ده بفتح قوسند طاش خاندّه . ه نومروده

«زغايك» غزته سی مدیری بالا قاشيان حوونان

S'adresser à

HOVNAN PALACACHIAN

Directeur du journal arménien « Dzaghik »,

Rue Bahtché-Kapou, Tach Han, 50

CONSTANTINOPLE

40 Փարս

Ազգային, Քաղաքական եւ Գրական

40 Փարս

ՆՈՐ ՇԵՋԱՆ — Գ. ՏԱՐԻ. ԹԻՒ 13

Շ Ա Բ Ա Թ

10 Ա Պ Ր Ը 1893

ԽՐԱՄԱՐԱԿՈՒՅ Ա. Ա. ՍՈՒՐԵՆՅԱՆ

Փ Օ Ս Ի Լ Մ Ը

Ի՞նչ, նախապատմական հետադոտու-
թիւն մը պիտի ընեմ կը կարծէք. —
քաւ լիցի, այդ իմ կարողութենէս վեր
է. գիտէք թէ Ֆոսիլներն ուրիշ բան
չեն՝ եթէ ոչ ջրհեղեղէն առաջ, շատ ա-
ռաջ, մարդու ծագումէն ալ առաջ
ապրող վիթխարի կենդանեաց կմախք-
ներ. բնախօս գիտունները միայն հե-
տըզհետէ երեւան կը հանեն զանոնք՝
պեղելով երկրի խորերը:

Բայց Ֆոսիլ գրականութեան մէջ փո-
խարեւրութեամբ կը նշանակէ եղեր նաեւ՝
կորսուած, մոռցուած անձերու կամ
գրիչներու երեւան գալը, գործօն վի-
ճակ ստանալը. արդ եթէ առաջին Ֆո-
սիլին վրայ գրել ներքի չէ ինձ, փո-
խարեւրալ Ֆոսիլը կարիքի է խմբագրա-
կանի մը նիւթ ընել. և ահա թէ ի՞նչ-
պէս:

Մաղիկի խմբագրապետ եղայ այն-
պէս, ինչպէս ուրիշներ այլ և այլ թեր-
թերու խմբագրապետ եղած են. մի-
այն թէ փոխանակ նոր ինքնոյ այս առ-
պարէզին մէջ մտնելու, 15-20 տարի ա-
ռաջ ալ խմբագրապետ եղած ու յետոյ
քաշուած էի. հանապազօրեայ թերթ մը
անուղղապէս ողջունելով այս երկրորդ
մուտքս, Ֆոսիլի նմանցուցած է զիս:

Ոչ միայն չեմ բարկանար, այլ և կը
սքանչանամ այս հանճարեղ սրամտու-
թեան վրայ, կատարելապէս իրաւունք
կուտամ, քանի որ՝ ոմանց հայեացքով՝
արդի Հայ ընկերութիւնը փոխուած է
եղեր. մինչ ես իմ լեզուաւ, իմ զգա-
ցումով, իմ գաղափարներով անդրջհե-
ղեղեան ժամանակին կը պատկանիմ:

Կը ցաւիմ միայն որ այդ պատուա-
նունն ուրիշներու ալ ընծայուած է, և
այսու՝ առանձնանորհումէ կը զրկուիմ:

Եւ ոմանց հայեացքով ի՞նչ փոփոխու-
թիւն կը կարծուի կրած ըլլալ Հայ ընկե-
րութիւնը:

Նախ. — աշխարհիկ գրական լեզուին
իշխանները ճանչցուած են հիմայ քա-
նի մը նոր գրագէտներ, որք մեռելու-
թեան հողը կը լեցունեն հին գրիչնե-
րու վրայ, նոր զարկ մը կուտան աշխար-

հաբարին՝ ըստ կամա ճշգրտով, կանո-
նաւորելով զայն, անոր վերջնական ձեւը
տալով. բառեր կը դարձնեն, կ'ա-
ծանցեն, կը բարդեն. հին բառերուն
նոր իմաստներ կուտան, ասութիւն-
ներ կը հնարեն և ծաղր ու ծանակ
կ'ընեն զանոնք՝ որք մեր հին գաղափար
լիզուին խորերը պրպտած ըլլալով կը
յանդգնին բերան բանալ իրենց դէմ:

Երկրորդ. — զգացումները նրբացած,
ազնուացած, վսեմացած են հիմայ.
այդ գրագէտները նոր նոր ճաշակ կու-
տան ամէն օր. ի զո՞ր է խղճմոտներին
խորհուրդ. հարցունելը թէ մարդու մը
գործոց ո՞րն է լաւը, ո՞րն է յոռին. ի-
մաստասէրներն ալ չեն գիտեր զայն,
կրօնքն ալ չցուցներ զայն. գիմելու է
այդ գրագիտաց, կարդալու է ազնեց
գործերը. բարոյասէրն հոն կրնայ յա-
գուրդ գտնել. կին մը՝ որու վրայ ա-
մուսինը կը գուրգուրայ, որու համար
անձը կը նուիրէ, կրնայ սիրահարիլ ու-
րիշի մը, հալիլ մաշիլ անոր համար, հի-
ւանդանալ... և մեռնելու միջոցին, երբ
սցն անկողնոյն մօտ նստած անմխիթար
կուլա՝ այդ կինը կրնայ ձեռքի մատա-
նին իւր սիրահարին զրկել... Երիտա-
սարդ մը կրնայ քծնիլ այս ու այն կը-
նոջ, և զայն իւր շուայտ ու ցփ կրից
անձնատուր ընելու համար՝ յօգուած
մը գրել, յորում սէրն հաշկուի տիւ-
զերաց կեանքին լծակն ու է՛ն ազնիւ
հաճոյքը... Դարձեալ, կանայք, պայ-
մանաւ որ թղթախաղի մոլութենէն մի-
այն ետ կենան, կրնան՝ հին նախապա-
շարունակներ թօթափելով՝ սիրային ար-
կածներու գիւցազնուհիներ ըլլալ, յայն-
ժամ այդ խեղճ արարածներն ոչ միայն
չպիտի քննադատուին, այլ և, իրենց
հաճոյքն անխափան վայելելու համար,
իրենց սիրագործութեանց շուրջը պատ
պիտի քաշուի. (պատ քաշել, բանուկ
արուեստ): Վերջապէս նորագոյն բարո-
յական մը կը քարոզուի, յորում սէրը
կը չփոթի անառակութեան հետ, Հայ
կուսին աւանդական ամբողջութիւնն ու
համեստութիւնը կ'ամօթահարուին և
կնոջ անհաւատարմութիւնը հոմերեան
գիւցազներգութեան նիւթ կը դառ-
նայ:

Երրորդ. — գաղափարները վեր ի վայր

դարձած, հրաշալի բարեփոխումներ
կրած են. սկզբանց ուղղութիւնը շղթա-
յի զարնուած հրէ՛ջ մ'է այսօր. օր ա-
ւուր ըզիէ դբան. համազում և սկզբ-
բանց ուղղութիւն ունենալը կը նշանակէ
չահն անտեսել և մտքի պարապութիւն
մատնանիշ ընել. իմաստուն հրապարակա-
գիրը կրնայ՝ մի և նոյն խնդրոյ մասին՝
ծիրանի գօտիի գոյներուն չափ տար-
բեր գաղափարներ յայտնել, այլ միշտ
զգուշանալով հասարակաց կարծեաց ու
համոզումին հետ գէ՛մ առ գէ՛մ բաղ-
խումի հանգիստի. այսպէս, կրնայ ը-
սել թէ այս ինչներն աւելի կարող են
այս ու այն պաշտօնները վարելու, և
քանի մ'օր յետոյ՝ այդ այսինչներուն
անգործութիւնը, տկարութիւնը պա-
խարակել. կրնայ հաւատալեաց վրայ
ջերմեռանդն վարդապետութիւններ ը-
նել և միւս կողմանէ անոնց ունայնու-
թեան վրայ ճառել, կրնայ հարուստե-
րուն համար այսօր ներքող յօրինել,
և վաղիւ վատահամբաւել զանոնք...
և այլն, և այլն...

Եւ ահա հիմայ գերեզմանին մէջէն,
անդունդին մէջէն կ'ընէ, ասպարէզ
կը մանէ 15-20 տարիէ ի վեր մոռցը-
ւած խմբագիր մը՝ հին գրչով, հին զգա-
ցումով, հին գաղափարներով. ՖՕՍԻԼ
մը չէ՞...:

Ա. Ա. ՍՈՒՐԵՆՅԱՆ

Մ Ա Յ Ր Ե Ի Զ Ա Ի Ա Կ

Մօր ազգեցութիւնն անուրանալի է և
այս մասին հարկ չկայ պատմութեան դիմել
և յառաջ բերել այն ականաւոր անձանց ա-
նուններն, որոնք մայրական ազգեցութեան
տակ դաստիարակուելէն զին՝ իրենց կեան-
քով մեծ տեղ գրաւած են մարդկային ազ-
գի պատմութեան մէջ:

Ես միայն քանի մը իրողութիւններ պի-
տի պատմեմ մօրս կեանքէն, որոնք անջինջ
ապաւորուած են յիշողութեանս մէջ և այ-
ժմ որ սկսայ գրել, գոգցես մայրս պատ-
կերացած է առջեւս իւր բարձր հասակաւ,
իւր սեւորակ և վառվռուն աչերով, իւր
մայրական բոլոր գորովանօք և անուշու-
թեամբ:

Թէև հայրս մի ուսեալ և բազմածանօթ
քահանայ էր, բայց նախնական ընթերցա-

նույն ժամանակ ուսուցչուհին մայրս եղաւ, որ միայն կարգաւ գիտէր և ոչ գրեւ, և կարգաւ ևս հօրմէս ուսած էր ամուսնանալէն զինի:

Շատ սակաւ ժամանակի մէջ ուսայ կարգաւ, բայց թէ ի՞նչ էր սոյն յաջողութեան պատճառն, ես ուրիշ բանի չեմ կարող վերաբերել, եթէ ոչ մայրական և որդիական սիրոյն: Դաստիարակութեան կամ մանկավարժութեան գիտութիւնն չառ եղանակներ հնարած է և կը հնարէ. բայց մօրս օրինակէն համոզուած եմ թէ՛ ամենին մեծ և առաջին եղանակն է Սէրն, այսինքն երբ ուսուցիչ և ուսանող զիրար կը սիրեն անկեղծ սրտիւ: Դաստիարակն ծնողական սէր և իզմ պիտի ունենայ իւր աշակերտի յառաջելիմութեան, և աշակերտն որդիական յարգանք պիտի տածէ առ իւր ուսուցիչն:

Այս տեղ է դաստիարակութեան մեծ գաղտնիքն:

Մայրս սքանչելի ձայն ունէր, որ կարծես թէ տակաւին կը հնչէ ականջիս: Սօր-նեք կ'երգէր նա, երբ կրտսեր եղբայրներէս մին տակաւին որրանի մէջ պիտի քնանար: Կ'երգէր նոյնպէս շատ անգամ Առաւելոս լուսայ և Առաւելոսեան քաղցր եւ անոյշ հո-վերն, որ Ղափանցի վարդապետի խորհրդաւոր երգն է: Մայրս բնաւ չէր կարծեր թէ իւր ամէն երգածներն արդէն ուսած եմ՝ առանց ստիպման, առանց յորդորանաց: Եւ ստիպողութեան հարկ չկայ բնաւ: Մարդ իսկոյն կ'ուսանի որ և իցէ երգ, երբ երգողն ի սրտէ կ'երգէ և երբ երգի եղանակն իւր սրտի խորն կը թափանցէ: Եւ ո՞ր եղանակ, ո՞ր ձայն կարող է այնքան քաղցր լինիլ մարդու համար, որքան իւր մօր ձայնն ու եղանակն:

Այս, որչափ անոյշ կ'երգէր մայրս, մանաւանդ երբ այդին կերթայինք և մենաւոր կը լինէր: Հայրս կնքած էր իւր կեանքը, մենք էինք մօրս ուրախութիւնն, և շատ անգամ կը ծածկէր մեզմէն իւր արտասուքն, որք կը թորէին իւր այտերէն՝ երգած ժամանակ:

Մօրմէս ուսածս միայն ընթերցանութիւնն ու երգը չէին. կային նաեւ գործնական դասերու օրինակներ, որոնք միշտ անընդմեջ մնացին բոլոր կենացս ընթացից մէջ:

Երբ հաց թխէինք (մեր գաւառի մէջ բնաւ չէն գործածելու հաց եփել կամ հացագործ բառերն, այլ հաց քիւլ, հացքուլ, որովհետեւ սովորաբար թօնրի մէջ կը պատրաստեն, որ քիւլով կամ փակցնելով կը կատարուի), իսկոյն հացեր կուտար մեզ, որ տանինք բաժնեք գրացիներուն, որոնք նոր հացի անմահական հոտն առնելով, անշուշտ փափաք կ'ունենային ճաշակելու: (Քաղաքացի փուռներու մէջ պատրաստուած հացերն կարծես թէ զուրկ են հրապուրիչ հոտէն, թերեւս ալիւրի խառնուրդի պատճառաւ:)

Շատ անգամ մայրս ուսեցանք կամ միգրելներ կուտար որ տանինք այս ինչ կամ այն ինչ տունն, իմանալով անշուշտ որ չքաւոր են և կարող չեն ունենալ երբեք նոյն ուսեցանքն և միգրելներէն: Կը փափաքէր յատկապէս որ մենք տանինք և օրհնութիւն ստանանք: Եւ արդարեւ ամէն հեղ կ'օրհնէին և կը գգուէին զմեզ և հետեւապէս թէ՛ իմ և թէ՛ եղբարցս՝ համար մեծ ցնծութիւն էր սոյն մայրական փափաքը կատարելն:

Մեր գիւղի մէջ, ինչպէս առհասարակ ամէն գիւղերու մէջ, առաւօտեան ժամերգութիւնը կանուխ կ'սկսէին և մայրս կը փափաքէր որ մենք անպատճառ եկեղեցի երթանք: Մանուկ էինք և կը սիրէինք շատ քնանալ. բայց այնպիսի մի միջոց ի գործ կը դնէր, զոր չէինք կարող մերժել: Նա եկեղեցուսէր էր, բայց չէր սեղեր մինակ երթալ և կըսէր մեզ՝ երբ ձեր փոխառացութիւնն ու երգեցողութիւնը լսեմ, հոգիս կը փառաւորուի, զի կը հաւատամ թէ Աստուած չմերժեք բնաւ խնդրուածներս, երբ զաւակացս հետ կ'աղօթեմ:

Սակայն իւր նպատակը միայն այս չէր, անշուշտ կ'ուզէր նաեւ գիտել թէ ինչպէս կը վարուինք եկեղեցւոյ մէջ և անթերի կը կատարեինք իւր տուած խրատներն:

Մեր գիւղի քահանայն, որ իմ հօրս մահէն զինի մինակ մնացած էր և կ'աշխատէր ամէն կերպիւ հօրս օրինակին հետեւել, շատ անգամ օրուան մը Աւետարանը տուն առ տուն կը կարդար և կը բացատրէր, և սովորաբար մամ բռնողներէն մին ես կը լինէի և ուշադրութեամբ կը դիտէի կարդացածն:

Մի օր, բացատրութեան ժամանակ, սը-խալմամբ թողուց մի տունն և սկսաւ յաջորդ կարգաւ, ես մանկական պարզութեամբ ցած ձայնով ըսի թէ՛ մնաց. — «Ի՞նչ», բարկացած գոչեց քահանայն. ես ևս բարձրաձայն աղաղակեցի. «Մնաց մի տունն»: Այս աղաղակիս վրայ մայրս յուզուեց և լացեր է: Երբ ժամերգութիւնն աւարտեցաւ և եկեղեցիէն ելանք, ժողովրդի մեծամեծներէն ոմանք, որոնք շատ կը սիրէին զիս, կամեցան պատճառն իմանալ և իրաւունք տուին ինձ, գովելով հանգերմ: Բայց սոցա գովեստը բնաւ չուրախացուց զիս, որովհետեւ երբ մայրս ալ եկեղեցիէն ելաւ և սկսանք միասին անխօսիկ քալել, նշմարեցի որ տը-խուր է:

Երբ տուն հասանք, մայրս բնաւ հարց ու փորձ չըրաւ, զի ինքնին արդէն հասկցած էր ամէն բան: Հանեց իւր հիւսածներէն երկու զոյգ գուլպա, ծրարեց մի թաշկինակի մէջ, և պատուիրեց որ անիմ՝ քահանային տամ, աջն համբուրեմ և իւր օրհնութիւնն առնեմ: Իսկոյն կատարեցի մօրս պատուէրն և երբ քահանայի տունն հասայ, որ մեր տունէն բաւական հեռի էր, ներս մտայ, ծրարը մի կողմ դրի և աջն համբուրեցի: Ես կը կարծէի թէ պիտի բարկանար, բայց չբարկացաւ, որովհետեւ հօրմէս շատ բարեքնեք տեսած էր և զմեզ կը սիրէր:

Վերադարձայ, մօրս պատմեցի, շատ ուրախացաւ և խրատեց որ ուրիշ անգամ այսպիսի վարմանց մէջ չգտնուիմ:

Սակայն տարիներ անցան և գրեթէ նըմանօրինակ մի անգագուշտութեան հանդիպեցայ:

Քաղաքի մէջ կ'ուսանէի և ամառնային արձակուրդին մեր գիւղը կուգայի: Ձեմ յիշեր թէ ո՞ր թուականին էր, հրատարակուած էր (ո՛չ օրացոյցներու մէջ) թէ այս ինչ օրն և այս ինչ ժամանակ արեգակը պիտի խաւարի: Գիւղին մէջ պատմեցի քաղաքի մէջ կարդացածս, բայց ի հարկէ շատերը չհաւատացին: Իսկ երբ օրն հասաւ և խաւարումն կատարուեցաւ, բաւական իրարանցումն եղաւ: Անսովոր մթութիւնն արհաւիրեց պատճառեց, կովերն սկսան բառաչել, ձիերը՝ խրինջալ, և այլն: Գիւղացի-

ներէն շատեր մեր տունը հաւաքուեցան, սկսան գովել զիս և իմաստուն անուանել: Ի՞նչ խեղճ իմաստութիւն:

Տակաւին սոյն խաւարումն զրոյցները կը շարունակէին գիւղին մէջ, փերեզակ Գաբրիէլն եկաւ, որ իւր շարժական տուր և առէն զատ՝ ծանօթ էր շինականաց իրրեւ նշանաւոր կարգացող, երազներ մեկնող, և այլն, և այլն: Սա հիւր եղած էր Տանուտէր Սմբատեանին, որ մօրս կողմանէ ազգական էր մեզ: Ոսք կը բացուի և փերեզակը կ'ուզէ տեսնել զիս: Կը կոչուիմ և կը նշմարեմ որ շատ մարդիկ ժողովուած են: Գիւղացիք կը զուարճանան շատ անգամ ցուեր և խոյեր կ'ուռեցնելով: Այս անգամ եղանակը փոխած են. կ'ուզեն որ վիճարանութեան բռնուինք փերեզակին հետ, որ երեւի թէ երկիւղ ունէր իւր համբաւի նըսեմանակէն:

Քանի մը հարցումներ կ'առաջարկէ, և ես կը պատասխանեմ, ոչ թէ ուսած, այլ լսած լինելով, ինչպէս են — Սաղմոսի մէջ՝ Բանի՞ անայր՝ տուն կայ. — Աստուած Բանի անուն ունի, և այլն: Ապա կ'ստիպեն որ ես ևս հարցնեմ, կը կարմիրիմ, կը տատանուիմ և չգիտեմ թէ ի՞նչ հարցնեմ այդ ծերունի մարդուն, Գերակոնութենէ՞ն, Պատմութենէ՞ն, Աշխարհագրութենէ՞ն թէ՛ այլ ուսմունքներէ, զորս կ'ուսանէի այն ժամանակ: Վերջապէս կը հարցնեմ. — Յաւնեմ բայի հրամայականն ի՞նչպէս է. — Պատասխան չը կայ. — Նոյի տապանն ո՞ր լեռան վրայ իջաւ. — Պատասխան չկայ. — Ի՞նչէն յառաջ կուգան տիւրքերն. — Դարձեալ պատասխան չկայ: Գիւղացիք կը հրճուին, կը ցնծան: Խեղճ ծերունի Գաբրիէլն բարկութենէն կրակ կտրած է:

Երբ տուն կը դառնամ, կը տեսնեմ որ մայրս ամէն բան լսած է, բայց ուրախ չէ: Իմ յաղթանակս բոլորովին հակառակ սովորութիւնն ունեցած է իւր վրայ: Ի՞նչ պէտք ունիս, ասաց ինձ, որ այդպիսի բաներու մէջ կը խառնուիս: Ասեմք թէ նա հարցումներ առաջարկեց քեզ. բաւական է որ պատասխան տուիր, ի՞նչ հարկ կար ըստ կողմանէ հարցումներ ընելու: Չխորհեցա՞ր որ այն խեղճ մարդն քեզ պէս դպրոց գնացած չէ, և արդէն քո ուսածդ ի՞նչ է. մի-թէ մի մարդ մի կտոր բան գիտնալով, անպատճառ ուրիշ պիտի վշտացնէ ու վիրաւորէ: Դու կարծես թէ գիւղացւոց ուրախութիւնը պարծանք է քեզ համար: Ես չեմ ուզեր որ այն ծերունի մարդու սիրտը վիրաւորուած մնայ: Շուտով պիտի երթաս, ձեռքը համբուրես, ներողութիւն խնդրես և այս երեկոյ կերակուրի հրաւիրես:

Սիրով կատարեցի մօրս պատուէրն, և այսօր, երկար տարիներ անցնելէն զինի՛ կ'զգամ թէ որչափ մեծ է մայրական ազդեցութիւնն: Բնութիւնն տուած է մայրերուն այն զօրութիւնն, որ հզօրագոյն է քան ամէն սաստ և սպառնալիք:

Մայրական սէրը նաեւ մի մեծ զօրութիւն է, որ զաւակները կը մղէ դէպի աշխատութիւն և յառաջդիմութիւն: Իմ ազանիւ ընկերներէս մին, (որոյ մահուան լուրը մի շաբաթ առաջ սիրտս խորին տրտմութեամբ համակեց) մի օր տեսայ որ վրացիներէն կը թարգմանէ Տէրունական աղօթքի դասերն, զորս մեր ուսուցիչը կը խօսէր ու մենք կը գրէինք: Հարցուցի. Միքայէլ,

որոն համար կը թարգմանես: — Մօրս համար, պատասխանեց, մայրս հայերէն չգիտէ, բայց վրացերէն լաւ գիտէ և ամէն ժամանակ կը գրէ որ նամակի տեղ քրիստոնէական դասերս թարգմանեմ և իրեն զրկեմ կարգալու: Միթէ առաւել քան զայս մեծ մխիթարութիւն կարող եմ ունենալ, երբ իմ ուղածս մայրս եւս կ'ուսանի, թէ և մըղոններով ինձմէն հեռի:

Ապա կարգաց մօրը գրած մի սրտաշարժ նամակն, որով կ'օրհնէր իւր զաւակն, կ'օրհնէր վարժարանն և կը յորդորէր որ անջինջ տպաւորէ իւր սրտին մէջ իւր ուսածներն:

Սոյն ազնիւ ընկերն, մեր վարժարանի գեղեցիկ զարդերէն մին, Աւագ չորեքշաբթի առաւօտէն կ'սկսէր ծով պահել՝ Աւագ հինգշաբթի հաղորդուելու համար, որ նաև բոլոր աշակերտացս Հաղորդութեան օրն էր: Իւր մօր օրինակն էր, որուն կը հետեւէր: Մայրն օրինակաւ աւանդած էր բարեպաշտութեան հոգին. իսկ զաւակը բաժին կը հանէր իւր մօրն՝ նաև իւր գրաւոր ուսածէն:

Հովիտ

ԲԱՐԻՁԵԱՆ ՅԻՇԱՏԱԿ

Ժամը եօթն ու կէսն է ըստ եւրոպացւոց:

Արեւն արդէն հորիզոնէն խոնարհած է. ֆրանսական ուստանը կ'սկսի իւր ինքնատիպ երեւոյթն զգեստել. օդային ու ելեքտրական լոյսն յորդան տուած է ամէն կողմ. սրճարանները, ճաշարանները, վաճառանոցները, փողոցներն ակնախտիկ կը փայլին, անթիւ բազմութեան և կառաց անցող-դարձէն սալայատակները չեն երեւիր այլ ևս. մոգական ու գիւթիչ կեանքով կը լըցուի մթնոլորտը. ամէնուրեք ցնծութիւն, խինդ ու կայտիւ:

Սիրտս տխուր՝ կը պտտկիմ Սէն-Ժաք ծառուղոյն վրայ... կեանքի այս զեղումը չը հրապուրէր զիս. պանդուխտ կ'ապրիմ աստ, հազարաւոր մզոն հեռու ընտանիքէս. միտքս կը բերեմ Պոլսը. զաւակաց ու բարեկամներու կարօտն յագուող չգաներ օտարութեան մէջ, նոյն իսկ եթէ Բարիզ ալ ըլլայ այն. ուստի կ'ուզեմ այդ գիշերուան ժամերը խեղդել, տեղ մը նետել ինքզինքս՝ ուր կարենամ ներկայն պահ մը մոռնալ. թատրոն մը գնալու համար գոնէ երկու ֆրանք վճարելու է. այդ՝ գործիս չգար, ուստի կը պտտիմ և ճար մը կը փնտռեմ:

Յանկարծ աչքիս կը գիպի պատի մը վըրայ փակցուած ծանուցման փոքրիկ թուղթ մը. կը մերձենամ կարդալու:

« Այս երեկոյ, ժամ 8 ին, Բանթ Էօնի մօտ « Մօնղաներ Սէնդ Ժընըվիէվ փողոցը թիւ... » սրահին մէջ, կարեւոր խնդրոց վրայ ճառեր պիտի արտասանուին: Մուտք երկու « սու »: (18 փարս):

Ֆրանսական ազգին հանրային կեանքն ուսումնասիրելու համար՝ հասարակաց հանգէսներու, թատերական ներկայացմանց, ներախօսանական ու Ծերակուտի ժողովոց նիստերուն ներկայ գտնուած եմ, տեսակ տեսակ լրագրեր ու հանգէսներ կը կարդամ, բայց այս երեկոյթն ալ շահագրգիռ է ինձ համար. կ'որոշեմ երթալ հոն: Քանի մը բուսկէն նշանակուած ծանուցման տեղը կը հասնիմ:

Իբր 100 քառակուսի մէքր ընդարձակ սրահ մը, բարձր ձեղունով. դրանը ճիշդ գիմնաց՝ պատին կից՝ առժամեայ բարձրաւանդակ մը կառուցուած է, բեմ, ուր ատենաբանք պիտի ելնեն խօսելու. բարձրաւանդակին առաջօք և սրահին լայնութեամբ շարուած են ութ տասն կարգ աթոռներ, գրեթէ հարիւր հատ. կրածեփ պատերը մերկ, ոչ մի զարդ. ձեղունէն կախուած հինգ վեց լամպարներ բաւական լոյս կ'արձակեն:

Ներս մտնելու ատենս դեռ սակաւաթիւ անձինք կան. յառաջ անցնելով, բեմին մօտ առաջին կարգի աթոռներէն միոյն վրայ կը նստիմ. սակայն ժողովուրդն հետզհետէ կը հասնի և որոշեալ ժամանակէն առաջ սրահը կը լցուի հոծ բազմութեամբ. շատերն ոտքի վրայ կը մնան. սլուզ հագած անձինք ամէն տարիքէ, շիֆ երիտասարդներ, ուսանողներ, ծեր դրագէտներ, պըչ-բուհիներ, ուրիշ կիներ ալ՝ որ անընդհատ գուլպայ կը հիւսեն, հարուստ, միջակ, աղքատ համախմբուած են անդ, խաւըն ի խուսն կը խօսին, կը վիճեն, կը խընդոն, կ'երգեն. — Ժխոր մը:

Յանկարծ ծայները կը դադրին. ամէնուն աչքը կը յառի բեմին վրայ երեւցող յիսնամենի պլուզաւոր անձի մը վրայ, ալեխառն մօրուսով, գէշ, կարմրայտ, կարճահասակ, կ'ողջունէ և կ'սկսի խօսիլ:

Ընթերցողը գուցէ չը հաւատայ, ինչ փոյթս. ես տեսայ, լսեցի և կը վկայեմ. այս անձը, որ կամ գարբին էր կամ կօշկաւար, մեծ ատենաբանի մը բոլոր հրապոյրն ու շեշտը կը դնէր իւր խօսքերուն մէջ. կը յորդորէր որ ամէնքը փոյթ տանին իրենց մտաւոր, բարոյական ու նիւթական վիճակը զարգացնելու և իրենց զաւակներուն տալու այնպիսի կրթութիւն մ'որ ապագային կարող ըլլան վայելել կենաց քաղցրութիւնը՝ իւր ամէն մասերուն մէջ:

Ուրիշ երեք անձինք ալ կը յաջորդեն իրարու, կ'ուսումնասիրեն զանազան խնդիրներ որոց մեծ ուշադրութիւն չեմ ընծայեր, բոլոր անորժս կը պահեմ վերջին խօսողին որ՝ ըսին ինձ՝ մանկամարդ աղջիկ մ'է:

Երեւան եկաւ նա վերջապէս:

Ճշմարտագէտ բարիգետն գեղադէմ կ'ին մը, պարզ ու վայելուչ հագուած. կը կանգնի բեմին վրայ, ոտքին մէկն յառաջ նետած՝ հրապուրիչ և զգլխիչ դիրքով. դեռ խօսելու չսկսած՝ ուժգին ծափահարութիւններ կ'ողջունեն զինքը. երիտասարդները լի են համակրութեամբ, տարիքոտ մարդիկ կը ժպտին, իսկ կանայք հետաքրքիր ու նախանձոտ նայուածք մը կ'արձակեն իրեն: Չեմ կարող ճշգրիտ գաղափար մը տալ այս մանկամարդ կնոջ քաղցր պերճախօսութեան վրայ. սէտք էր ինձ իւր ճառը գոց ըրած ըլլալ և օրինակելաստ: Հանգէպ ամուսին էրիկ մարդուն՝ կնոջ կացութիւնը կը նկարագրէ փափուկ և հիանալի ծայնիւ, իր արտայայտած նոր նոր ու տարօրինակ գաղափարները կ'ոսկեզօծէ՝ ունկնդիրներուն կըլնեցնելու համար. կը քննադատէ ամուսնական սեզմիչ դրութիւնը. կը պահանջէ որ ամուսինք, այր և կին, ազատ լինին կապուած մնալու, կամ եթէ ձանձրանան, ամուսնական կապը խզելու, անխտիր հաւասարութիւն ընծայուի առն և կնոջ, մանաւանդ նախամեծար կը համարի որ կինն ամուսնոյն վրայ առաւելութիւն ունենայ

ամուսին կենաց մէջ. այն ատեն մանկութիւնն աւելի լաւ պիտի խնամուի և մարդիկ պիտի երջանկանան, և այլն:

Մէկ ժամու չափ մոտիկ ըրի այս տկար արարածին. յայտնած քանի մը առողջ և օգտակար գաղափարներուն սքանչանալով հանդերձ՝ կը դիտէի որ Տօն-Բիօթի դղեակներ կը կառուցանէր, և իր անձն մեծ մաս մը կը դնէր խօսքերուն մէջ, մինչեւ հասկցունել ունկնդրաց՝ թէ ինքն ամուսնացած չէ:

Երբ աւարտեց, ներկայ ամուսնաւոր կանայք նախադարձակ եղան իրեն դէմ. շատերն առարկութիւններ կ'ընէին, նախատական բառեր կ'ուղղէին խեղճ աղջկան և կը կոչէին իրենց ամուսինները, հասկնալու համար թէ համակարծիք էին ամուսնական կապին ըստ կամա լուծելութեան. այրերը, սրահին ամէն կողմը, բարձրաձայն կը ծիծաղէին, բայց չէին դիմախօսեր. կը զրուարձարանէին. « Օրիորդ, քու էս կուտամ ձեր պահանջումներուն, թէ պէտ և չեմ գիտեր թէ հետեւանք ո՞ւր պիտի երթայ», կ'ըսէր մին. « Ծատ գեղեցիկ խօսեցաք. երթամ կինս ձգեմ, բայց զաւակներս ի՞նչ ընեմ », կը յարէր ուրիշ մը:

Սակայն երիտասարդ պարոն մ'անակնկալ տեսարանի մը հանդիսատես կ'ընէ ըզմեզ. բեմին վրայ ցատքելով դէմ առ դէմ կը կանգնի ամազոնիս, գլխարկը ձեռքին մէջ, և գլուխը խոնարհեցունելով կ'ըսէ.

— Սքանչացայ ձեր ճառին վրայ, օրիորդ, մոքի այսքան կարողութիւն և սրտի զգայնութիւն ունեցող կնոջ մը հետ ապրիլ երջանկութիւն է ինձ. կը հաճի՞ք ձեռքերնիդ տալ. ամուսնանանք. նախ քաղաքային պաշտօնատունը կ'երթանք, յետոյ եկեղեցւոյ օրինօք կը պսակուինք:

Բոլոր ունկնդիրքս շունչերնիս բռնած, սիրտ ի թունդ, ոտքի ելած եմք. իրական թատերգութիւն մը կը կատարուէր դէմերնիս, ինչպէս պիտի վերջանար:

Կիները «մրսի վրա՞դ» կը մրմնջէին:

Օրիորդն յապուշ կրթած էր. ծուկները գեղեցիկ կ'ընալ սկսան, դէմքը շառագունեցաւ և կամաց ծայնով « զձեզ չեմ ճանչեր, պարոն », ըսաւ. երիտասարդին տողդ և սիրուն դէմքը, ջլուտ մարմինն անհաճոյ չէին երեւար իրեն:

— Այս բազմութեան մէջ յիսունէ աւելի անձ կայ որ զիս կը ճանչէ, անոնք վկայութիւն կուտան ինձ համար:

— Այո՛, այո՛, Ժան Ֆրանսուա բարի և աշխատասէր է, գոչեցին բազմութիւն ծայներ:

— Մոտիկ ըրէ՛ք սակայն, օրիորդ, յարեց Ժան Ֆրանսուա. ամուսնական կապերնիս անխախտ պիտի մնայ և ինձ հնազանդ պիտի մնաք. կ'ընդունի՞ք այս պայմանները:

Օրիորդը չիկնելով, և քիչ մը տատամսելէ յետոյ, կը պատասխանէ.

— Գ'ընդունիմ:

— Վստահի՛մ:

— Ֆրանսուահին Վալանդին իր պատուոյն վրայ կը խոստանայ:

Եւեակ ծափահարութեամբ և կեցցէներով շնորհաւորեցաւ նոր ամուլը. երկու խօսեցեալները թեւ թեւի տուած դուրս ելան սրահէն, զիս և շատերն ապշուածեան մէջ թողլով և ընդունելով ծանօթներու բարեմաղթութիւնները:

— Ո՞ւր մնացին պահանջումներդ, կը պօռան կանայք:

Կէս գիշեր է, երեկոյթը կը վերջանայ և ամէնքս կը ցրուինք:

Հինգ շաբաթ յետոյ, Բարիզու ԵՊՊ շրջանակի թաղապետութեան մէջ, կատարուեցաւ ժան Ծրանսուայի և պերճախօս ամազոնին, օրիորդ Վալանդինի ամուսնութիւնը:

Ա. Ա. ՍՈՒՐԵՆԵԱՆ

ՀՐԱՇԱԳՈՐԾ

Անգղիերէն Հանդէս Հանդիսից անուն թերթն որ 500,000 բաժանորդ ունի արդէն, օր ըստ օրէ ահագին ու զարմանալի հեղինակութիւն սկսած է ստանալ ժողովրդեան մտաց վրայ՝ շնորհիւ իւր խմբագրատեղին, Պ. Սթէյնի, որ դաւապեցիկ հրաշագործի համբաւը կը վայելէ բացարձակ, և որու առջեւ խոնարհելու պէս շարժումներ կ'ընեն տգէտն ու գիտունը, նանրահաւատն ու սկիզբալիկները:

Այս անձը՝ իրմէ հեռի, չա'տ հեռի գրտնուղներուն հետ կրնայ յարաբերութիւն հաստատել: ոչ թէ նամակաւ կամ հեռագրով կամ հեռաձայն գործիքով. ոչ, ասոնք հինցած, նորութեան շրջանին անցուցած են. Պ. Սթէյն՝ Անգղիա գտնուելով, երբ ուզէ գիտնալ թէ Գաղղիոյ մէջ այս ինչ անձն ի՞նչ կ'ընէ կամ ի՞նչ կը խորհի և կամ ի՞նչ կ'ուզէ իրեն իմացունել, թղթի վրայ գրիչ մը կը բռնէ և հեռաւոր անձին իմացակաճութիւնը իւր (Սթէյնի) ձեռքին գրել կուտայ գիտնալ ուզուածը:

Պ. Սթէյն խենթ մը չէ. բոլորովին հակառակը. միանգամայն շատ լուրջ է:

Նիւ-Եօքքի «Ինտիմէնտէնզ» թերթին աշխատակիցներէն մին տնցեալներն հետաքրքրաշարժ տեսակցութիւն մ'ունեցած է իրեն հետ՝ այս խնդրոյն վրայ, որուն շահեկան մէկ մասը կ'արժէ աստ ներկայացնել ընթերցողաց:

«Ինտիմէնտէնզ»ի աշխատակիցն իրեն կը հարցնէ թէ ի՞նչպէս կը յաջողի ինքզինքը մտաւոր յարաբերութեան մէջ գնել բացակայ եղող մէկու մը հետ:

Շատ պարզ կերպով, կը պատասխանէ Պ. Սթէյն. բացակայ եղող անձին իմացակաճութիւնը իմ ձեռքին գրել կուտայ՝ ինչ որ ինք կը խորհի կամ կ'ուզէ ինձ իմացնել:

— Կը հաճի՞ք իմ ներկայութեանս պիղտիկ փորձ մը կատարել:

— Ամենայն սիրով, կը տեսնէք որ քարտուղարս բացակայ է, կը փափաքիմ գիտնալ թէ ե՞րբ պիտի գայ, հիմա՛ պիտի հասկընամ. զայս ըսելով Պ. Սթէյն սեղանին առջեւ կը նստի, թերթ մը սպիտակ թուղթ կ'առնէ և առանց ձեռքը թղթին կամ սեղանին դպցնելու՝ գրիչը կը մօտեցնէ թղթին. ձեռքը նոյն հետայն կ'սկսի շարժիլ և գրել, բայց վերջին բառը չաւարտած՝ քարտուղարը — խարտիչագեղ աղջիկ մը — ներս կը մտնէ. Պ. Սթէյն թուղթը կը ներկայացընէ «Ինտիմէնտէնզ»ի աշխատակցին. թղթին վրայ գրուած էին քարտուղարին անունն սկզբնատառերը և անոնց ճիշդ քովկը «Ահա եկայ»:

— Կարելի չէ՞ որ ասիկա պարզ զուգագիտութիւն մ'եղած ըլլայ:

— Կարելի է, բայց ասիկա արդէն ինքնին շատ աննշան փորձ մ'է, անդին ուրիշ ա'յնպիսի փորձեր ունիմ, որոց մէջ զուգա-

գիտութեան նշոյն անգամ չենմարուիր: Այսօնցմէ միայն երկուքը պատմեմ ձեզ:

«Տիկին մը որ իմ թերթիս աշխատակից է, ժամագրութիւն մը խնդրած էր ինձմէ Անգղիոյ հիւսիսային կողմի ամառանոցներէն միոյն մէջ տեսնուելու համար. հոն եղբայր մ'ունէի, որ կայարանէն տասն վայրկեան հեռաւորութեամբ առն մը կը բռնէր և քանի մ'օր առաջ իրեն հիւր եղած էի. որոշուած օրը տիկինը պիտի գար երկաթուղիով, ժամը «Երեքին տասներեք», ինչպէս ինքը գրած էր. բայց ցոյց տուած ժամը կրնար երեքէն քիչ մը առաջ կամ քիչ մը ետքը հասկցուիլ. և ես որ կը փափագէի տիկինը կայարանին մէջ դիմաւորել, պէտք էր որ ճիշդ ժամը գիտնայի. կայարանէն հեռու գտնուելով՝ ժամանակացոյցը չէի կարող նայիլ, ուստի հարկ տեսայ որ իրեն հետ մը տաւոր յարաբերութեան մէջ մտնեմ. տիկինին իմացակաճութիւնը ձեռքին գրել տուաւ որ երեքին տասը մնացած՝ կայարան պիտի գտնուի. փութացի կայարան և տեսայ որ իրօք ժամանակացոյցին մէջ ալ նոյն պէս նշանակուած էր. բայց որոշեալ ժամուն կառախումբը չերեւար. ժամն երեք եղաւ, երեք տասն, երեք ու կէս, դարձեալ չկայ, մտաւանջութիւնս երթալով կ'աւելնայ և վերստին կը դիմեմ տիկինոյ իմացակաճութեան. այս անգամ ալ ձեռքին գրել կուտայ, «Վերջընթեր կայարանին մէջ չափէն աւելի սպասեցինք, այս է յապաղման պատճառը. այժմ ճամբայ ելած ենք և մօտերը գտնուող կոր գիծը դառնալու վերայ ենք, մէկ քանի երկվայրկեանէն կը հասնինք»: — Հազիւ աւարտած էր գիրս, երբ կառախումբը սուլեց. տիկինը դուրս ելածին պէս առաջին հարցումս եղաւ՝ իրեն յապաղման պատճառը. ճիշդ նոյն պատասխանը տուաւ ինչ որ գրել տուած էր ինձ. այն ատեն ձեռքին թուղթը ցոյց տուի նմա, ապաւեցաւ մնաց և յարեց թէ ինք բռնաւ ո'ւ է սպաւորութիւն չէ ունեցած կառախումբին մէջ, ո'չ ալ ո'ւ է գիտակցութիւն՝ իրեն մտաւոր յարաբերութեան վրայ:»

Պ. Սթէյն շարունակեց. «Տղաքս գիւղը գնացած էին զբօսական պտոյտի և լուսանկարներ կ'առնէին. իրենց լուսանկարչական ապակիներն սպառած ըլլալով գրեցին ինձ որ նորէն զրկեմ. ես ալ զրկեցի: Բայց ապահովուելու համար թէ ձեռքերնին հասած են թէ ոչ՝ իրենց հետ մտաւոր յարաբերութեան կը մտնեմ և կը տեսնեմ թէ չեն ստացած ապակիները. անմիջապէս կ'երթամ այս մասին բացատրութիւն պահանջել՝ զրկելու պաշտօն ստանձնող անձէն. կ'պահովէ զիս թէ զրկուած են. նորէն յարաբերութեան կը մտնեմ տղոցս հետ, նորէն կ'իմանամ թէ ապակիները չեն հասած. բայց այս անգամ կ'ենթադրեմ որ փորձերը չեն յաջողիր. քիչ օրէն տղաքս կը վերադառնան և իրենց առաջին գանգատը սա կը լինի թէ ինչո՞ւ ապակիները չեմ զրկած: Իմացակաճութիւնը, սերմն, ուղիղ կատարած էր իւր պաշտօնը:

— Հեռաւորութեան մեծութիւնը տարբերութիւն կ'ընէ՞, Պ. Սթէյն, փորձին յաջողութեան վրայ:

— Ո՛չ երբէք, բացակայն որչափ կ'ուզէ թող հեռուն լինի, արդիւնքը միշտ նոյնը կը մնայ:

— Ի՞նչպէս առաջին անգամ գիտցաք որ դուք այսպիսի հիանալի կարողութիւն մը ունիք:

— Ինձ ծանօթ կ'ին մը առաջին անգամ իւր բացակայութեանը, զայդ զգացուց ինձ. յայտնի է թէ ես արդէն մագնիսականութեան խնդիրներով կ'զբաղէի, երբ ականարկած կնոջս իմացակաճութիւնն ինձ գրել տուաւ թէ, «Ինչո՞ւ չէք հաւատար որ ձեզ ծանօթ ո'ւ է մէկու մը իմացակաճութիւնը կրնայ հեռունէն ձեր ձեռքը գործածել և ձեզ ո'ւ է խնդրի վրայ տեղեկութիւն հաղորդել, փորձեցէք և պիտի տեսնէք որ այս կարողութիւնը ունիք»: Ասոր վրայ շատ մը ծանօթներու վրայ փորձեր կատարեցի և յետոյ ստուգեցի որ փորձերս կատարեալ պէս յաջողած են:

— Այս փորձերը կրնա՞ն գերեզմանէն անդին ալ յաջողիլ:

— Այնպէս կը կարծեմ, քանի որ գերեզմանէն անդին ալ իմացակաճութիւն կայ. մեռած մէկու մը իմացակաճութիւնը կրնայ իմ ձեռքին գրել տալ ինչպէս կենդանի մարդունը:

— Բայց այն ատեն մարդկային մտածութեան հիմունքին մէջ ի՞նչ ահագին յեղաշրջում:

— Հիմա դեռ վճռապէս բան մը չեմ կարող ըսել. այս կարեւոր գործին համար արդէն գիտնական տիւրմբ մը կազմուած է որ յատկապէս պիտի ուսումնասիրէ իմ փորձերս և օրէ օր կ'սպասենք որ այս բոլոր հրաշալի երեւոյթներուն գիտական յստակ և որոշ բացատրութիւնը տրուի:»

Մեր կողմանէ կ'աւելցունեմք թէ Պ. Սթէյն հասարակութիւնը խարող ձեռնածու մը չէ. այլ գիտուն մը որ իւր փորձերը խղճամիտ ուսումնասիրութեան ենթարկած է. ինքը կ'ենթադրէ թէ մոքերու յարաբերութիւնը երեքարական հոսանքի պէս բան մ'է և թէ մարդիկ այդ հոսանքը ուղած ատեննին իրարու կը փոխանցեն. Որքան եւս Պ. Սթէյն ուղղամտութեանը կասկած չունինք, կ'սպասենք սակայն տեղեկագրին և եզրակացութեանց:

Ահա երեւոյթներ որք զմեզ «Հաղար ու մէկ գիշերներու» մոգական աշխարհին մէջ կարծես կը փոխադրեն:

ԼԵՒՈՆ ՄԿՐՏԻՉԵԱՆ

ԱՆԱԿՐԵԿԱԼ ԳԻՒՏ ՄԸ

Վերջին տարիներս Անգլիացիք ձեռնարկեցին Արիփիկի հարաւային կողմը խուղարկութիւններ կատարելու, ոսկւոյ հանքեր գտնելու համար: Թէ և իրենց նպատակին չհասան, բայց իրենց աշխատութիւնը հրաշալի արդիւնք մ'արտադրեցին: Զուլուստանի մօտ, Մաշոնաներու երկրին մէջ, ծովու երեսէն իւր 1100 մեղր բարձրութեան մը վրայ գտան Զիմբաբուէի աւերակաց շարքը, որ կը ձգուին Մազնէ գետին եղբայր շատ մը բլուրներուն վրայ և կը ծածկեն յոյժ ընդարձակ տարածութիւն մը, պարսպով չորջապատեալ, Մէլտեղը՝ 130 մէր բարձրութեամբ բլրոյ մը վրայ կը բարձրանայ միջնաբերդն, որուն մէկ կողմը գտնուած խորափորն՝ բնական ամրութիւն մ'ալ կը յաւելու: Բերդաբաղաբին պարիսպն իւր 10 մեղր բարձրութիւն և 4 մէր թանձրու-

թիւն ունի, տեղ տեղ ձգուած են նեղ պատահաններ, որոցմէ հնար էր նետեր արձակել: Ուրեմն այս աւերեալքաղաքին բռնակիչք պաշտպանողական դիրք մը բռնելու ստիպուած էին, և վստահութիւն չունէին չըջակայ ցեղերուն վրայ:

Կը թուէր թէ բնիկք աւելի ոսկի հանելու կը պարագայէին: Դեռ աստ անդ ցիր և ցան կը մնան անոնց այլ և այլ դուրծիներն, որսիսիք են՝ հաւոցներ, ուղորկիչներ, ոսկւոյ ձոյլեր՝ բրիչներու հետ խառն: Դարբնոց մ'եւս կայ բերդաքաղաքին սատրոսը, ժամանակին շատ լաւ կարգաւորեալ:

Կը կարծուէր թէ Սողոմոն թագաւորին ի տես դայող և 120 տաղանդ ոսկի ընծայող Սաբա դէլսոյին ոսկիներն աստի էին:

Պարսպին հարաւային ծայրը կը գտնուէր տաճար մը, որուն պատերուն արտաքին կողմը կը նմարուէին կարգաւ ագուցեալ վիմաքանդակ թուռներ: Տաճարին մէջ տեղը կը գտնուէին խառն ի խառն ամաններ, կոնքեր, և այլն, և այլն, որոց վրայ կը տեսնուէին երկրաշարիական կանոնաւոր ճիւղ ձեւեր: Ներքնատանց մէջ գտնուած են այլ և այլ ձեւով նիզակներ և ոսկեզօծ տէգեր:

Ասոնցմէ կը յայտնուէր թէ, Գափիրք այս աւերակաց մէջ բնակած են հին ատեն: Իսկ աւելի յառաջ կը բնակէր սեմական ցեղէն խիստ քաղաքակիրթ ժողովուրդ մը՝ որ կառուցած է զայդ շինութիւններ:

Կ. Յ. ՊԱՍՄԱՃԵԱՆ

ԳԵՐՄԱՆՆԵՐԻ ՀՈՎՈՐԻ ՄԷ ԿՈՐԺԻՔԸ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

Ի Լէյպցիկ, ուսումնական նպատակաւ գումարուած համաժողովոյ մը մէջ, Գերմանացի հովիւ Պ. Ֆապէր, որ ճանապարհորդած է ի Փոքր Ասիա և ի Պարսկաստան, ժողովին անդամոց ծանօթացուցեր է գումարման մասնակցող երեք հայ ուսանողները և այս առթիւ հակիրճ ատենաբանութիւն մը ըրեր է, որուն բովանդակութիւնն է հետեւեալը:

«Այստեղ կը տեսնենք երեք Հայ ուսանողներ: Շատ ժամանակ չկայ որ այցելցի Փոքր Ասիա և Արարատէն անցնելով Ուրմիա գնացի: Ուղեւորութեանս միջոցին շատ ազդեր տեսայ, բայց Հայ ազգի նման կենսալից, եռանդուն և հոգեկան ընդունակութիւններով օժտուած ժողովուրդ քիչ եմ տեսած: Հաւատարիմ եւ անձնուէր են իրենց բարեկամութեան մէջ: Ուրմիա երթալու ժամանակ, զիւղի մը մէջ իջեալնեցանք Հայ քահանայի տունը, ուր Հայուն յատուկ հիւրասիրութիւն գտանք: Գիշերը տանիքին վրայ անցուցինք: Չեմ կարող մոռնալ այդ գիշերը, երբ հարաւի ջինջ և կապոյտ երկինքը բերաւ որ աստղերով կը շողողար մեր գլխուն վերեւ, և հիւրասէր քահանան իւր երեկոյեան սրտաբուլիս աղօթքով կ'որհնէր զմեզ և բարի վիճեք կը մաղթէր: Հանգիստ քնացանք մենք՝ մեզ համար պատրաստուած փափուկ անկողնի մէջ, բայց տանտէրը իբրեւ գիշերապահ հսկեց մեր ապահովութեան համար: Ոչ միայն այդքան, այլ և առաւօտուն նա մեր ուղեկիցը և առաջնորդը եղաւ՝ մեր ճամբան շարունակելու համար:

«Տեսայ վեհապանծ ձիւնադուլս Արա-

րատը, որ մարդկութեան օրրան է եղած, և մի քանի օր նորա հիւսքանչ տեսքը դիտելու բաղդն ունեցայ: Արարատի ստորոտըն է հնադարեան էջմիածին վանքը, ուր շատ բաներ տեսայ՝ նուիրական իրենց հընութեամբ: Այս վանքը Հայոց Մայր Աթոռն է: Դա հիմնուած է դեռ այն ժամանակ, երբ մենք Գերմանացիքս քրիստոնէութեան մասին տեղեկութիւն անգամ չունէինք:

«Հայք այժմ՝ կը բնակին Թուրքիոյ, Ռուսիոյ և Պարսկաստանի մէջ, Հայ ազգն ունի բազմակողմանի ընդունակութիւններ, հետամուտ է Եւրոպական քաղաքակրթութեան: Ահա նա հեռաւոր Ասիայէն այս տեղ դրկեր է իւր որդիները՝ աստուածաբանութիւն, փիլիսոփայութիւն ուսնելու համար: Գերմանական համալսարանաց դռները բաց են անոնց համար, ինչպէս և ամէն ազգի համար: Քրիստոնէական սիրոյ ոգին Ասիան Եւրոպիոյ հետ միացուցած է: Թող բարի լինի նոցա գալուստը:»

Ներկայ Հայ ուսանողք յարգելի Հովուին ձեռքը սեղմելով, յայտնեցին իրենց ջերմագին շնորհակալութիւնները:

(Նոր-Նոր էն քաղուած)

ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՆԱՄԱԿԱՆԻ

Ներդաւանակ դաստիարակութիւն

Գաստիարակը պարտի մանաւանդ իր սանն հասցունել այն կէտին, յորում սա ինքնին գործէ լաւագոյնն ըստ կարի, և ցոյց տայ իր վարքով ներքին ներդաւանակութիւն մը հոգեկան: Հ. ՄԱՐԻՈՆ

Ազնիւ Արմենակ, Ջարմանալի չէ՛նք, և մանաւանդ չէ՛նք դատապարտելի:

Ամէն բանի մէջ կը փնտռենք ներդաւանակութիւնը. բնութեան մէջ մեր սքանչալուցումը կը նուիրենք անոր. գիտութեանց հրաշակերտները անօժ կը գրաւեն մեր խորին ակնածանքը. գեղարուեստն՝ եթէ անմասն ըլլայ անկէ՛, կը համարինք անարգ. կեանքն իսկ զգուանք չա՞գգեր մեզ, երբ ըլլայ լոկ միօրինակութեան և անհեթեթ պայմանաց հիւսկէն:

Ամէն տեղ մեր ըղձանաց առարկայն է միշտ ա՛ն, ներդաւանակութիւնը, ի բաց առեալ կրթութեան մէջ՝ յորում սովոր ենք հիանալ ամէն բանի վրայ որ ներհակային (աններդաւանակ) է, յորում փափաքող ենք ծնունդ տալ անհեթեթ երեւութից, սքանչանալ նոցա վրայ: Մանուկ մը՝ որ մեծ մարդու պէս խորհի՛ ու անոր չափ բան գիտնայ, մեծ մարդ մը՝ որ մանկային թեթեւամտութիւն ունենայ և նոյնչափ ալ յանդուգն դատողութիւն, երկուքն ալ ըսքանչելի կը թուին մեզ: Եւ ակնածանք կը խոնարհինք ամէն կրթական դրութեան առջեւ՝ որ քաջավարժ ըլլայ մանուկ-մարդուն մէջ արտադրել այս կամ այն միակողմանի զարգացում, գերընտիր աստիճանաւ. ուստի երբ տեսնենք փոքրատի աշակերտ մը վտիտ, տոգոյն և հիւժեւալ՝ որ զօրաւոր մտքով գերազանցութիւն ցոյց կուտայ, յանձնալ կը գովենք այն ձեռքն որ այնպէս ըրած է զայն. և երբ մեզ ներկայանայ ու-

րիշ անոր համատի ընկերներէն մին՝ որ թէպէտ մտօք անկար, այլ մարմնով կորովի ու ճկուն, կատարէ գիւրարեկութեամբ շարժումներ մարմնամարզական գործեաց վրայ, ընկ ի տես այդ մարզանաց և ո՛չ ուրիշ բանի՝ կը կրենք մոգիչ տպւորութիւն, ու մեծագոյն բառերով կը դրուատենք անոր կրթիչը:

Մասնաւորաբար մենք ալ, ուսուցիչ կամ դաստիարակ, ինչպէ՛ս շատ անգամ մեր աշակերտաց մէջէն կը համակրինք նմա որ՝ խիստ գիւրազգած՝ կ'արտասուէ ի լուր աղէխարչ հատուածի մը, և որ կը մարմնքի կաթիլ մը արեան ի տես: Այսպէս, մեր համակրութենէն յորդորեալ, յանգէտս կը վարժի սանիկն անձնատուր ըլլալ անկանոն կերպիւ իր զգայնիկ բնութեան, տակաւ կորսնցնելով կամքի զօրութիւնը և անսաստեղով բանին:

Որչա՞փ կը գովենք, նոյնպէս, այն աշակերտ որ անխռով ու անյոյզ է, հանդարտաբարոյ և խմստասիրի մը պէս ծանր. կը գովենք զանի, բայց պէտք չենք տեսներ ազնուացնել այդ ծանրախոհ միտք որտի ներշնչումներով և օժեւ զայն զգացմանց միւռնոսով. կը թողունք զանի առանձինն՝ հանդէպ իր բնական տրամադրութեանց որոնք ի վերջոյ կ'իջխեն անոր էութեան վերայ և թերեւս կ'ընեն զանի հանճար մը ցուրտ ու անզգայ:

Եւ որո՞ւ հաճելի չէ այն անձ որ՝ մեղրամոմի պէս կակուղ՝ ամէն ձեռքի մէջ կը ձկի, ամէն հովի առջեւ կը դառնայ, ամէն սկզբուն կը յարի անխորհուրդ և անկարեկիր: Եւ սակայն ներդաւանակային է այս մեր ընթացք:

Եթէ հոգեկան կարողութիւնք — իմացականութիւն, Ձգայնութիւն, Գործունէութիւն — զիրար կը լրացունեն և իրարու վրայ ունին փոխադարձ ազդեցութիւն, և եթէ դաստիարակութեան նպատակն է մարդուն ամբողջական զարգացումը, ինչպէ՛ս կրնանք հոգւոյն այս երեք կարողութիւններէն մին կամ երկուքը կրթելով, զարգացնելով, մնացեալը տկար թողուլ և սակայն այսու ըսել թէ այս մեր ընթացք համաձայն է կրթական ներդաւանակութեան: Եւ ցաւալի է ըսել՝ անցողաբար՝ թէ այս նպատակին համար, համերաշխութեան նըշան իսկ ցոյց չեն տար բնաւ մինչեւ անգամ այն ուսուցիչներն ու դաստիարակներ՝ որոնք պաշտօնակից են միւսնոյն վարժարանին մէջ:

Իմացականութիւն, Սիրտ, Կամք. մտքի այս երեք կարողութեանց բարւոք զուգորդութեան ու մշակման մէջ է ահա ներդաւանակութիւնը. և ըստ այսմ, դաստիարակը պարտի մարդկային կենաց սոյն երրեակ լծակներն համընթաց վարել, ուղղել այնպէս, որ իմացականութիւնը՝ սուր պայծառ, սիրտը՝ արի ու բարի, կամքն ըլլայ ուղիղ զօրաւոր:

Ընդհանուր տեսութեամբ ուրեմն, սոքա, հոգւոյն երեք կարողութիւններն, են հիմունք դաստիարակութեան և առարկայ ներդաւանակ զարգացման:

Մաղթելով որ կարող ըլլանք, դու եւ ես, մեր սանուց դաստիարակութեան մէջ գէթ մասամբ իրացունել այս ներդաւանակութիւնը,

Մնամ քոյդ ՍԵՊԱՆԷ

ՀԱՅ ԱՇՈՒՂՆԵՐ

Ծաղիկ սկսած է կազմել Հայ Աշուղներու ցուցակը, առաջարկութեամբ Կեսարիոյ Առաջնորդ Տ. Տրդատ վարդ. Պալեանի։ Այդ գործին օգնելու համար կուգամ և ես հաղորդել երկու Հայ Աշուղներու անուններն։

Ա. Մանուկ, Արդին Աղամճանեան, երգած և գրած է Տաճկերէն, որոյ՝ Մանիսայու մէջ երեւելի աշուղներու հետ երգել և մրցելուն ականատես և ականջալուր եղած եմ։ Բնիկ Զմիւռնիացի է և վաղուց ի Գասապա տուն և բնակութիւն հաստատած։ Ուսում չէ առած, բայց իւր բնատուր ձրից և տաղանդի շնորհիւ, այժմ վկայեալ քաջաբան փաստաբան հանդիսացած է։

Բ. Զիլեթի, Գրիգոր Կեսարացի երգած և գրած է տաճկերէն։ Ի պատանեկութենէն թողլով իւր հայրենիք, եկած բնակած է ի Գասապա, և 7-8 տարի առաջ մեռած։

Կան Մանիսացի մի երկու ևս, ինչպէս մին՝ Ալեքիյա, Թոյ հաճի Յակոբ, բայց նոքա միայն երգող են և ոչ թէ երկող, ուստի Աշուղ չեն համարուիր։ Աշուղ անոնց պէտք է ըսել, որք վարպետին երկասիրութիւններըն հասկնալու, քննադատելու և գրելու կարողութիւն ունենալէն զատ, իրենք ալ երկասիրելու կարող լինին, ինչպէս են Զիլեթի (1), Փէրուսեան (2) և ուրիշներ։

Կը գտնուին և Հայ աշուղներ, որք ո'չ սաղ ունին ի ձեռնին, և ո'չ հաւաքածոյ ի բերան։ Բայց աշուղ են, երկասիրած են և կ'երկասիրեն երբ և ինչ որ ուզեն։ Իրենց երգեր տաճկերէն Գալէմ շուարասը կը կոչուին։ Այս կարգէն կը համարուի և Հուրբին որ երկասիրած է տաճկերէն, և ականաւոր աշուղներու հետ գրով մրցած։

1893 մարտ 22 Յ. Յ. ԴԱՐԲԻՆԵԱՆ
Գասապա

(1) Սա ուսուցիչս (տաճկերէնի) լինելուն համար, քաջ գիտեմ և վկայեմ, որ Մանիսայի դպրոց, սորա բարեջան տեսչութեան օրով ունեցած է աւելի բարեկարգ և յառաջագէմ վիճակ, աշխատակցութեամբ ողորացեալ Յովհաննէս հայկարան վարժապետիս։

(2) Սա ևս քեռիս լինելուն համար, քաջ գիտեմ որ անունը վարդան էր, ոչ թէ Միքայէլ։ Ուստի կը խնդրեմ Գեր. բանասէր վարդապետէն, որ իւր հրատարակելի յիշատակագրին մէջ ուղղէ այս վրիպակը, որ եղած էր «Մաղիկ» ի Բ. տարի թիւ 35 թերթին մէջ ի շարս աշուղաց։ Այս Բէրուսեան աշուղը Զմիւռնիոյ Ազգ. հիւանդանոցին մէջ մեռած և մինչեւ հոգին քաղուիլը սրտաշարժ երգեր երգած է։

ՍԻՄՈՆ ԳԱՐԱՄԱՃԵԱՆ

ՀԱԻԱՔԱՄՈՅ աշխարհիկ գրուածոց, մասն Ա. Բ. ախպ. (պատկերազարդ)։

Գին 5 դահեկան

Մասն Բ. 7 1/2 դահեկան

ՆՈՐ ԲԱՌԱԳԻՐՔ Հայերէն լեզուի

Գին 15 դահեկան

Կեդրոնատեղի Պալենց գրատուն, Չաքմաքճըլար եօգուշու թիւ 20։

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱՆՆԼՈՒԿՆԵՐ

Երկայն աղիք
Ճօթը ծաղիկ։ (Մոմ)

Ոսկի կճուճիկ
Միջուկն անուշիկ։ (Կաղին)

Հանք հանք՝ հրամանք,
Օխտը դրան դէմ հասանք։ (Մեծ պահք)

Կլորակ դեղին,
Աշխարհի սիրելին։ (Ոսկի)

Պիճի պիճի մարդիկ եկան.
Սեկէ սեկէ վարաբ հագան։ (Շաղանակ)

Մթիկ տուն
Դմբիկ բուն։ (Գերեզման)

Մայրը կատարեալ աշխարհ չեկած,
Որդին երգիկն է եկած։ (Մուխ)

Դեղին ճգման հագեր է,
Արաին թումբը պառկել է։ (Դեղում)

Մարմինը փայտ է,
Հոգի շունի, ինչպէս կ'ուտէ։ (Ծխաքար)

Անուր դերձան,
Անծակ մարգարիտ
Աստուած կը շարէ
Մարդը կու քաղէ։ (Խաղող)

Ելայ դուռը,
Քաշեցի թելը,
Թափաւ սիսեռը։ (Կարկուտ)

Փետուրով կու ցանեն,
Աչքով կու քաղեն,
Գլուխով կ'ուտեն,
Մաքով կու մարսեն։ (Ուսումն)

Զգեստը բոլոր կապուտ է
Մարմինը թիփ ձերմակ է
Գլուխը սուր վեղարի նման
Ոտները տափակ խոնջի նման։ (Շաքար)

Խ. Օ. ՇԱՄԼԵԱՆ

ՍԻՐՏՊ

Սա ճարճանոց բոցին մէջ վառ
Կ'ուզեմ տեսնել քո սիրտ ջրառ,
Սիրտ որոյ մէջ վիճակ կը ծրփան,
Ուր յոյգեր կան աստ անդ ցիւր ցան։
Կ'ուզեի հոն սիրելի հալէր,
Հոն ցնդէին բոլոր վեհեր,
Հեղուկ մ'ըլլար մանրագորի,
Այդ հեղուկէն ես ըմպէի։

Եւ ըմպէի անյագօրէն
Վրէժէդ զրքեալ սէրդ համօրէն,
Եւ ըմպելոյդ ուժին ներքեւ
Արեւնայի, անկէի քեւ։

Երազէի քէ չըլլար բնաւ
Մեհիկդ այրած յոյգով ամբաւ.
Այդ ըմպելին զիս փոխադրէր
Աւելարհ մ'ուր խնդ լիներ եւ սէր։

Եւ այդ աւելարհ սիրելի ըլլար,
Սիրելի, որ արդ սիրախօս լար՝
Ինձի համար միայն յուզուէր.
Ապրէի հոն ըմպելով սէր։
ԵՆՏԵՐՊԷ

ԾԱՂԿԱՆՅ ԼԵՁՈՒ

Ահա թէ իւրաքանչիւր ծաղիկ ինչի խորհրդանշան է։

Գառնադմակ (տամբօրուղու), աշխուժութեան, առտնին տնտեսութեան։

Գարնանաձաղիկ (չուխա չիչէի), մտախոհութեան, յանկուցիչ շնորհաց։

Գեղձ (պօրու չիչէի), կասկածաց, անբատութեան։

Գեղնալոնձոր, դարմանաց։

Գգի, (աք աղած), չափաւորութեան։

Գիւնի, (արաւճ աղած), օգնութեան, պաշտպանութեան։

Գինձ, (քիչնիչ), թաքուն արժանիքի։

Գիւնաղուարն, (կէճէ սէֆա), երկչորութեան։

Գօշ, (չոր դեղում), տարածութեան։

Դամակավարդ, (կիւհաթէմ), արգասաւորութեան։

Դափնէվարդ, (զըքըմ), «զգուշացիր» ըսելու։

Դեղնի ծաղիկ, «գերիդ եմ» ըսելու։

Դիւաճար, (պալուրը գարա), հաշտութեան։

Դիւնաձաղիկ, փոփոխամտութեան։

Երեմոս, անգթութեան «դուք չաւ կարծրասիրտ էք» ըսելու։

Եղնակգու, (լիսանի սէլվի), ստույթեան։

Ելակ, մեծադոյն շքեղութեան։

Եղնակակ, (ատա չայը), յարգանաց, ընտանեկան առաքինութեան։

Եղերդ, (հինդիպա), բաւականասիրութեան։

Եղեգն, գոհունակութեան։

Եղին, (ըսըրլան օթու), անգթութեան։

Եղեւին, (չամ), հիւսիս։

Ս. Գ.

ԿՈՎԵՐՈՒ ՏԱՐԻՔԸ ՀԱՍԿՆԱԼ

Այս կենդանւոյն օգտակարութիւնն այնքան մեծ է և հանրածանօթ որ դրեթէ չը կայ անձ մը որ չը փափաքի կովի մը աչքը ըլլալ, պայմանաւ որ յարմար գոմ մը ունենայ և գիտնայ այդ սիրուն կենդանին լաւ խնամել. ենթադրենք թէ պայմանաց մէջ էք և կ'որոշէք կով մը գնել. ի հարկէ կ'ուզէք նախ որ կենդանին տարիքը առած չըլլայ. սակայն վաճառողը շատ խորհուրթեանց կը դիմէ, գիւտեր կը հնարէ որոց շնորհիւ կրնայ դեռատի ցուցնել ծերուկ կովը։

Գիտնալու է թէ կով մը մինչեւ երեք տարեկան հասակը եղջիւրներուն վրայ չունենար ու է փոս. իսկ երբ չորս տարեկան ըլլայ, եղջիւրին վրայ փոս օղակ մը կը գոյանայ, որ թէ՛ աչքով կը տեսնուի և թէ՛ շօշափմամբ կը հասկցուի. Հինգերորդ տարին ուրիշ օղակ մ'ուս կ'երեւայ և այսպէս շարունակաբար ամէն տարի մէկ մէկ օղակ կ'աւելնայ. այս օղակներն եթէ չտեսնուին ալ, գոնէ շօշափմամբ կ'զգացուին։ Մի աճապարէք սակայն ըսելու թէ գաղտնիքը սովորեցաք. վաճառականը ձեզմէ խորամանկ է, նա այդ գաղտնիքը գիտէ արդէն, ուստի կովու տարիքին այս բնական նշանները ձեր աչքէն ծածկելու համար՝ ապակիի կտորով

մը կը քերէ և կարծի փայտով այն աստի-
ճան կը չփէ, որ եղջիւրն արտասուողը փայլ
մը կ'ստանայ և օղակները բոլորովին կ'ան-
յայտանան: Փորձառու և աչքը բաց յաճա-
խորդը պէտք չէ խաբուի այդ արուեստա-
կան փայլէն: Եղջիւրները եթէ լաւ մը չօ-
շափուին, զգալի կ'ընեն չիւղած ու տա-
փակցած օղակները:

* *

ՀՈՎԱՀԱՐՆԵՐՈՒ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Քանի որ ապրիլ ամսոյ մէջ ենք, թէ և
ցուրտն զգալի է տակաւին, կրնամք այլ ևս
գարնան գեղեցիկ ու գաղջ արեւն ողջու-
նելու պատրաստուիլ, և առ տակաւ պէտքն
խսկ զգալ հովահարներուն որք պիտի գան ի-
րենց ծառայութիւնը մատուցանել փափկա-
սէրներուն: Մեք կը կանխեմք ուրեմն քանի մը
սողով կանանց այս կարեւոր զարգին վրայ
պատմական տեղեկութիւններ տալու: Հնա-
գէտք կ'ենթադրեն թէ՝ հովահարները
Քրիստոսէ 10-12 դար յառաջ հնարուած են:
Եգիպտոսի թէյէ անուն հին քաղաքին ա-
ւերակաց մէջ, գերեզմաններու վրայ քան-
դակուած կը տեսնուին երկու կամ աւելի
մարդկանց պատկերներ, որք ոտքի վրայ
կեցած՝ մէկ մէկ հովահար ունին իրենց ձեռ-
քը՝ այդ պատկերներ կը ցուցնեն թէ հոն
թաղուածն, ո՞վ որ է, իւր կենդանութեան
ատեն ունէր սպասաւորներ, որոց պաշտօնն
էր հովահրել զինքն: Թէ հովահարներն ա-
մենէն առաջ ո՞ր հնարուած են, այս մա-
սին կարծիքներն անհամաձայն են: Ոմանք
կ'ըսեն թէ ամենէն առաջ Եգիպտոսի, Արա-
բիոյ, Հնդկաստանի և ուրիշ տաք կլիմայ
ունեցող երկիրներու մէջ հնարուած են,
մինչդեռ կան նաեւ՝ ոմանք որք այս գիւտն
Չինաց և Ճապոնացոց կը յատկացնեն: Հին
ատեն հովահարները կը պատրաստուէին ա-
մէն տեսակ ծառոց բարակ ճիւղերէն, մաս-
նաւորապէս արմուէնիէն: տակաւ առ տա-
կաւ սկսան շինուիլ նաեւ սիրամարզի փե-
տուներէ, մետաքսէ և վերջապէս թուղ-
թէ ալ: Եգիպտացոց, Ասորեստանցոց և
Յունաց հովահարներն այն աստիճան մեծ
էին, որ աղնուական դասու անձինք զայն
գործածելու համար մասնաւոր ծառայից
անհրաժեշտ պէտքը կ'զգային: Հովահարնե-
րը հիմա այնքան թեթեւ են որ հին ժամա-
նակ ծառայներու համար եղած ծախուց
մէկ մասով թերեւս հարիւրաւորներ ծա-
խու կ'առնուին այժմ: Հին Հռոմայ ազնուա-
կան դասու տիկնայք իրենց հովահարները
կրող յատուկ սպասուհիներ ունէին որք կը
կոչուէին Ֆրէպլիի Ֆրա, այսինքն հովահա-
րակիր — եթէ ներելի է այսպէս ըսել:

Ի սկզբան հովահարներն աննշան նիւթե-
րէ կը շինուէին, այնպէս որ ամէն մարդ կըր-
նար զայն գնել: սակայն ԺՁ-րդ դարու
մէջ, նուրբ արուեստիւ գործուած հովա-
հարներու պատրաստութեան փափաքն յաղ-
թանակեց և Ֆրանսայի մէջ խիստ ծանրա-
զին հովահարներ շինուեցան: միջին դասու
ժողովուրդը չկրնալով գնել անոնցմէ և չ'ու-
զելով ստորին տեսակը գործածել, արքուն-
եաց և ազնուականաց տիկիները միայն հո-
վահարով երեւիլ սկսան: Հովահարներն այդ-
դարու մէջ իրենց փառաց գազաթնակէտն
հասած էին: աղամանքներով, մարգարիտ-

ներով կը զարդարուէին: Նշանաւոր դժագ-
րիշներ իրենց վրձիններու հրաշքը հովահար-
ներու վրայ ցոյց կուտային:

Եւրոպայի մէջ հովահարի գործածու-
թիւնը գրեթէ կանանց մէկ առանձնաշնոր-
հումը համարուած է: մինչդեռ Չինու և Ճա-
պոնի մէջ հակառակն է: հոն աւելի էրիկ-
մարդիկ կը գործածեն զայն քան թէ կիսե-
րը: Չինացիք զիրար բարեւելու համար փո-
խանակ Եւրոպացոց պէս գլխարկ հանելու,
իրենց հովահարները կը շարժեն:

Ամէն տեսակ և ամէն գնով հովահար-
ներ մեծ քանակութեամբ կը պատրաստուին
հիմա Ֆրանսայի, Սպանիոյ, Իտալիոյ, Պել-
ճիգայի, Թուրքի և Ճապոնի մէջ: Ասոնց-
մէ ամենէն շատ ընդունելութիւն գտնողը
Ֆրանսական հովահարներն են:

* *

ՏԻԵՋԵՐԱԿԱՆ ՄԱՐԴԱՀԱՄԱՐ

Աշխարհի բնակչաց ենթադրեալ թիւն է
1,497,000,000: Ասոնց կէսէն աւելին Ասիոյ
մէջ, գրեթէ մէկ չորրորդն Եւրոպիոյ մէջ
և մնացեալն ալ աշխարհի միւս մասանց մէջ
են: մեզմէ իւրաքանչիւրն այս թիւին մէջ է
անշուշտ: Երեք հազարէն աւելի լեզու կայ,
գրեթէ նոյնքան ալ ցեղ: Հազար տեսակէ
աւելի կրօնք կայ: Մարդկային կեանքի տե-
ւողութիւնը միջին հաշուով 33 է: Մէկ օր-
ուան մէջ ծնողներէն 1000 էն մին հազիւ
100, և 100էն հազիւ 6ը 65 տարին կը թե-
ւակոխէ: Քաղաքակիրթ ցեղերը, վայրի և
վրանարնակ ցեղերէն աւելի շատ կ'ապրին:
1000էն 75ը ամուսնացած են: ամուսնաց-
եալք ամուրիներէն աւելի շատ կ'ապրին:
Օրը, գրեթէ 150 հազար հոգի կը մեռնի:
միւսնոյն ժամանակի մէջ ծնածներու թիւը
քիչ մ'աւելի շատ է մեռնողներու թիւէն:

Յ. Մ. ԱՋՆԱԽՈՐԵԱՆ

ՄԵՐ ՀՈՐԻՋՈՆԷՆ ԴՈՒՐՍ

Ի ՊԵՆՃԻՔՍ շատ տարիներէ հետէ կ'ուզ-
ուէր հաստատուել ընդհանուր քուէարկու-
թեան սկզբունքը: վերջին եօթնեկին մէջ
տեղեկութիւններէն կ'իմանամք
որ երեսփոխանական ժողովոյ կողմանէ մեր-
ժուած է այդ մասին եղած առաջարկն:
այս մերժմամբ ի ՊԵՆՃԻՔԱ նորանոր ներքին
կնճիռներ ծնունդ կ'առնուն:

Ի ՍԵՐՊԻՍ պատանի Աղեքսանդր թա-
գաւորին անակնկալ և կտրուկ մի տնօրի-
նութիւնը կուգայ վերջ տալ երկրին յեղ-
յեղուկ կացութեան: Թագաւորը ինքզինք
չափահաս կը հռչակէ և կը կազմէ նոր նա-
խարարութիւն մի՝ որոյ գլուխ կը նշանակէ
նոյն իսկ իւր գաստիարակը: Սքոտլանդն
կը լուծէ և մայիս 17 ին համար նոր ընտ-
րութիւններ կը հրամայէ քաղաքական բո-
լոր բանտարկելոց կը ներէ: այսու համա-
ձայնութիւն կը գոյանայ երկրին և տիրող
սերնդեան մէջ: կ'ենթադրուի թէ այս ի-
րողութիւնը արդիւնքն եղած են այն հաշ-
տութեան որ ինչպէս յայտնի է, քիչ ատեն
յառաջ տեղի ունեցած է նախալի թագուհի-
ւոյն և Միլան թագաւորին միջև: զարմա-
նալի է աշխարհի քաղաքական ընթացքն:
ոչ ոք կարող է բացարձակ հեղինակու-

թեամբ իւր կարծիքը տալ անցած դարձած
իրողութեանց վերայ: ո՞վ կարող էր ըսել՝
մի տարի յառաջ, որ, թագուհին նախալի
պիտի յաղթէր ամէն արգելից, և յաջոյն
վերջապէս իւր ամուսինը դարձեալ առ ին-
քն ձգէլ:

ՅԻՏԱԼԻՍ Հիւմպերթօ թագաւորին եւ
իւր թագուհւոյն՝ գեղանին Մարգարիտայի
ամուսնութեան քսան և հինգ ամեակը
պիտի տօնուի քիչ ատենէն: Իտալական
ազգն անձկանօք կ'սպասէ այդ աւուր, ուր
համարէն վեհապետը իւրեանց բարեկամու-
թիւնն և յարգանքը պիտի փութան մատու-
ցանել Սափուայի արքայական Տան: տարա-
կոյս չը կայ որ այդ օրն իւր մասնաւոր նը-
շանակութիւնը ունի Իտալիոյ համար: այս
առթիւ ազգը պիտի համուզուի որ Փիւնիկն
Իտալիա արդարեւ իւր մոխրէն յարութիւն
առած՝ քաղաքական աշխարհի մէջ յարգելի
դիրք մ'ստացած է: երկրին բանակը նոյն
օրն իւր վեհապետին հաւատարմութեան
նոր ապացոյցներ տալու ատեն՝ պիտի զգա-
ցնէ միանգամայն որ ի Հռոմ միայն մի
թագաւոր կայ, և այդ ալ Սափուայի ար-
քայական զարմին շառաւիղն է: Գերմանա-
կան մամուլն սոյն հանդիսին նկատմամբ դը-
րելու ատեն կ'իմացնէ որ Հռոմայ Պապին և
կայսեր միջեւ տեսակցութիւն մը պատրաս-
տուած է՝ ուր երկու դաշնակցութեան
կեանքն ապահովող կարգադրութիւններ
պիտի տեղի ունենան եղեր: Գաղղիական
աղբիւրէ առնուած տեղեկութիւնք գեր-
մանական մամուլն այս հրատարակութեանց
հակառակն իմաց կուտան: Գաղղիական կա-
րեւոր թերթերն բացարձակ վստահու-
թեամբ կը յայտարարեն որ, ըստ որում գեր-
մանիոյ կառավարութիւնը Ռասթալի մէջ
շարունակ կաթոլիկ կուսակցութեան կող-
մանէ ընդդիմութեանց կը հանդիպի և իւր
վերջին գինուորական ծրագիրներն քուէար-
կել տալու համար անհուն դժուարութիւն-
ներու կը բաղխի, հետեւաբար իրաց այս վի-
ճակին դարման տանելու համար կայսրն ու-
զած է Պապին հետ տեսակցութիւն մ'ու-
նենալ՝ և այսու գուցէ միջոց մի գտնել
գերման կաթոլիկաց սիրտն ու քուէն շա-
հելու ի նպատակ ծրագրին: Քաղաքական
աշխարհի մէջ գաղղիական մամուլն այս կար-
ծիքն իբրեւ ճիշդ կ'ընդունուի:

Ի ԳԱՂՂԻՍ օրուան ամենէն մեծ խնդիրն
է գատապարտեալ թիւրքէնի շնորհուած
ներումը: Թիւրքէն որ Գաղղիոյ բանակին
մէջ գործածուելու համար հնարուած մե-
լիկիդ անուն քիմիական բաղադրութեան
հեղինակն է, շուրջ երկու տարի յառաջ կը
գատապարտուի՝ իբրեւ հայրենեաց գաղտ-
նիքն ի յայտ ածող ոք, և կը բանտարկուի:
Բայց այս գիւտով թիւրքէնի առ Գաղղիա
մատուցած անհուն ծառայութիւնը տակաւ
առ տակաւ հանրային կարծեաց մէջ արդա-
հատանաց հոսանք մը յառաջ բերաւ ի նը-
պատ իւր անձին, և հանրապետութեան
նախագահն ևս ազդուած հանրական փա-
փաքէն, վերջերս ներքեւ նմա: Թիւրքէնի
նկատմամբ եղած այս շնորհն՝ հանրապե-
տութեան հակառակորդաց ձեռք պատըր-
ուակ մ'եղաւ և այս մասին Երեսփոխանաց
ժողովոյ մէջ հարցում իսկ ուղղուեցաւ նա-
խարարութեան: Թիւրքէնի խնդրոյն կարե-
ւորութիւնը յայնմ կը կայանայ որ իւրա-
քանչիւր Ֆրանսացիի սրտին մէջ չը կայ

երկրի վրայ այնքան նուիրական առարկայ՝ որչափ բանակը, Թիւրքէնի գիւտն այդ բանակը կ'օժտէր անհամեմատ անհղ զօրութեամբ մը. հանրապետութեան կառավարութիւնը պարտէր ուրեմն զոհել ամէն բան՝ չափելու համար այդ անձը. բայց ահա նոյն ինքն՝ այդ անձն է որ բանտէն ազատուելուն պէս նախարարութեան դէմ ծանր ու գայթակղեցուցիչ յայտարարութիւններ կ'ընէ: Քաղաքական ու զինուորական ազդեցիկ անձնավորութեանց պահանջման վրայ կառավարութիւնը քննութիւն բացած է եղած յայտարարութեանց արժէքը ճշդելու համար, ուստի պէտք է սպասել մինչեւ որ գաղղիական թերթեր այս մասին մեղ ճիշդ տեղեկութիւններ հաղորդեն: Գաղղիա իւր քաղաքական կեանքին եղանակը վերջնականապէս որոշած է: Վերջերս կատարուած գաւառական վարչային ժողովոց համար հանրապետականաց ստուար մեծամասնութիւն մի զրկելով, գաղղիական ժողովուրդն զգացուցած է կատարելապէս՝ թէ իւր ընդունած կառավարական միակ ու վերջնական ձեւն Հանրապետութիւնն է:

ԱՆԳՂՂԻԱ իւր իսլամական կարեւոր խնդրով դեռ շատ ատեն պիտի գրադի, որով՝ Եւրոպիկ միջոց պիտի ունենայ իւր ընթերցողաց հաղորդել սոյն խնդրոյն վրայ ընդարձակ և կարեւոր մի տեսութիւն:

Գ. Խ. ՊԻԻԼՊԻԻԼԵԱՆ

ԱԶԳԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատրիարքական հրամանաւ, Քարակէօմրիւկի Տ. Համաղապ քահանայն արգելում է տեղւոյն եկեղեցւոյն մէջ պաշտօնավարել՝ ցվախման քննութեանց որ բացուած են իրեն վերագրեալ գայթակղական արարոց մասին:

Հրամանագիրն ոչինչ կը տրամադրէ նոյն քահանային ծխական հովուութեան նկատմամբ:

— Լրագիրք ծանուցած էին թէ Ամերիկայի Հայոց հոգեւոր հովիւ Տ. Յովնէփ վարդապետ Սառաճեան հրաժարեր է իւր պաշտօնէն. մեր առած ստոյգ տեղեկութիւնք այդ լուրը կը հերքեն:

— Պատրիարքարանը որոշեց սույն մը հաստատել և հոն նշանակել ազգային հաստատութեանց և ընկերութեանց հաշիւները, մասնաւորապէս հրաւիրել այն հաստատութիւններն և ընկերութիւններն, որք Պատրիարքարանէն արտօնեալ խնամակարութեանց հրահրութեան ներքին չեն դնուիր, իրենց գոյքն ու գրառք յայնչեւ Տնտեսական Խորհրդոյ Պատրիարքարանի աւանդից սնուակին մէջ պահուելու համար:

— Տիմրիկի Առաջնորդ ընտրուեր է Տ. Մամրէ Ծ. վարդ. Բզնունի, որ արդէն առաջնորդական տեղապահ պաշտօն կը վարէր անդ:

— Ակնայ Առաջնորդ Տ. Յակոբ վարդ. Յակոբեան հրաժարեր է վատառողջութեան պատճառաւ:

— Զմիւռնիոյ Հայ տիկնանց Հոգատար—

Որրախնամ Միացեալ ընկերութիւնն որքանոց մը հաստատեր է, Բացման հանդէսը տեղի ունեցեր է ապրիլ 1ին, Հայ Ընթերցատան սրահին մէջ, ընդ նախագահութեամբ Առաջնորդ Տ. Ներսէս Ծ. վարդ. Ասլանեանի, որ ազդու առեւտրականութեամբ մը գովեր է սոյն մարդասիրական գործին գլուխ կանգնող Տիկններն: Ասոնց կողմանէ պատասխաներ է Տիկն Գր. Զիլինկիրեան, բացատրելով իրենց նպատակն որ է որբ աղջիկները դաստիարակել և գաւառաց համար վարժուհի պատրաստել զանոնք: Որբերու թիւն է առ այժմ վեց:

Կը շնորհաւորեմք Զմիւռնիոյ Հայ կանանց այս առաքինական ձեռնարկը և յարատեւութիւն կը մաղթեմք:

— Զմիւռնիոյ կողմալուծեալ Աղքատասիրաց ընկերութիւնը վերակազմուեր է:

— Կը լսենք թէ Թիֆլիսի Ներսէսեան վարժարանի նախկին աշակերտներէն Միքայէլ Տէր Բարսեղեանց կնքած է իւր մահկանացուն: Սա իւր ուսումն աւարտելէն զինի, վարած էր զանազան պետական պաշտօններ, և ապա տառնձնանալով Կորի քաղաքին մօտ, սիրովանք գտած էր գիւղական կենաց մէջ:

— Կը լսենք նոյնպէս թէ Պրուսայի Առաջնորդ Տ. Բարթոլոմէոս Արքեպիսկոպոս վերջնապէս հրաժարեր է իւր այս պաշտօնէն, խոնջութեան և վատառողջութեան պատճառաւ: Սրբազանը, բժշկաց խորհրդոյն անսալով, մտադիր է թողուլ իւր Զէնկէլ-Քէյօյի բնակարանն և Բերա փոխադրուիլ:

— Վաղը, կիրակի Ս. Պատրիարք Հայրն ի Խաղիւղ և Տ. Մատթէոս եպիսկ. Իգմիրեան ի Մաքրիւղ Ս. Պատարագ պիտի մատուցանեն:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պատգամաբաւտիւնք. — Հալէպի Զէյթուն գաւառակին գայմադամ անուանեցաւ Թէվֆիւր պէյ, նախորդ գայմագամ Պիլան գաւառակին: — Հաշուակալութեան գիւտն անգամ կարգեցաւ Գարագաշ Կարապետ էֆէնտի:

Պատգամաբաւտիւնք. — Վիհ. Սուլթանը լարեհաճեցաւ իմթիաղի ախանակուռ պատուանշանը շնորհել Մեծ-Եպարքոս Բարձր. ճէվատ փաշայի, Ականակուռ Օսմանիյէ՝ Թնդանթարանի վերատեսուչ Վսեմ. Զէյի փաշայի, ինչպէս նաև Ականակուռ Մէճիտիյէ՝ առաջին սենեկապետ Վսեմ. Հաճի Ալի պէյի, առաջին կարգի Օսմանիյէ՝ Ոստիկանութեան նախարար Վսեմ. Նաղմ պէյի, նոյնպէս առաջին կարգի Օսմանիյէ՝ Բ. սենեկապետ Ֆէրիդ Նուրի Փաշայի և սենեկապետ Բաղդա ու Մէհմէտ պէյերու:

— Սուկուրլու գիւղաքաղաքացի հայազգի Մըգճը օղլու Արմենակ, տեղւոյն Հայոց եկեղեցւոյն պատուհանները կոտրած և մաս մը գոյք գողցած լինելով, դատաւարտուեր է՝ յետ նշաւակման՝ երեք տարւոյ չղթայակապ աշխատութեան: Արմենակ մին է եղեր այն վնասակար անձերէն — տեղեկագրուած է Էնկիւրիի կուսակալութեան:

առ Բ. Դուռն — որք իրենց եկեղեցիները կ'այրեն, այդ կարգի նենգութիւններ ընելու կը յանդգնին և սովորութիւն բրած են իրենց այդ քամահրելի գործերը վերագրել իսլամ ժողովրդեան:

— Իւնիայի գայմագամ Ասաֆ էֆէնտի Ճանիկ գաւառը կոչուեր և ինչ ինչ պատճառներու համար քննութեան ենթարկուեր է:

— Մալաթի թերակղզւոյն հարաւային կողմի Պոհօրի երկրին վեհապետը կիւրակէ երեկոյ մայրաքաղաքս ժամանեց Աղէքսանդրիայէն և իջեւանեցաւ ի Բերա Օթէլ Ռուսյեալ: Ունի չորս հետեւորդներ որք են քարտուղար մը, թիկնապահ մը, բժիշկ մը և սպասաւոր մը: Վեհապետն յաջորդ օրերըն այցելեց Պոլսոյ նշանաւոր վայրերը:

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՕՐԻՆԱԳԻՐՔ

ԿԱՄ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԻՐԱՒՈՒՆՔ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ

Ամուսնակաճ օրէնք Գոյն եկեղեցւոյ

Հայագէտ Տիմրիկիոս էֆ. Զօլաքեան ձեռնարկած էր յունարէնէն թարգմանել սոյն անունը կրող ամենակարեւոր գիրքը. այս անգամ իւրոյ կը հանէ զայն ընտիր թղթի վրայ Պաղատալեան մաքուր տապալութեամբ և հաստատուն կազմով:

Մաղիկի խմբագրապետը գրած է յառաջարանը և գրքին մէջ աւելցուցած է խիստ հետաքրքրական և մեծ խնամով ընտրեալ ծանօթութիւններ, պատմական լուսաբանութիւններ, յաւելումներ, բաղդատական ցուցումներ և զանազան ազգաց ամուսնական օրէնսդրութեանց վրայ հասուն դիտողութիւններ, որով և սոյն գիրքն արժանի ընծայուած է ամէն աստիճանի խելահաս անձանց ընթերցման և խորհրդածութեան:

Ամուսնական օրինադրքը պիտի բազկանայ չորս հատորէ: Այս առաջին հատորէն զատ միւս երեք հատորները պիտի պատրաստուին Մաղիկի խմբագրապետին աշխատասիրութեամբ, յորս պիտի խօսուի Լատին և Հայ եկեղեցեաց ու իսլամաց ամուսնական իրաւանց վրայ:

Բաժանորդագրութիւնը չորս հատորին համար 40 զուրուշ է, կէսը կանխիկ վճարելի: Իւրաքանչիւր հատոր զատ կը ծախուի ի գին 15 զրուշ:

Կեդրոնատեղին է Պաղատալեան գրատուն, Սուլթան համամ ճատտէսի, թիւ 14, կը գտնուի նաև գրավաճառաց քով:

ԱՐԺԷՔ ԴՐԱՄԱՌՈՅ

ՍՈՒՄ: Իւրաճ 100 զրշ. էն

Մէճիտիյէ	107 32	Վեցնոց	101
Քառորդ մէճիտ	106 30	Բուսիոյ բօլ	90 15
Մանր մէճիտ	102 25	Նաբալէոն	87 35
Մէթալիք	96 30	Կրիմից	51 16
Հինգնոց	100 30	Անգղ. լիւր	110 14

Մանէթ թղթադրամ 8 68

Գոնտիլիտէ	24 21	Բուս. երկ.	92 1/2
Թահիլ. Օսմ.	84 30	Թաւալիյէ	17

ԱՐՏՈՆԱՏԻՐ Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

ՏՊԱԳՐ. ՆԵԱՆ Կ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի-Ջապիէ փողոց, քիւ 61